ԵԴ1/0093/01/25
(ՀԿԴ/0073/01/25)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հուլիսի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0093/01/25 (ՀԿԴ/0073/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2025 թվականի հունվարի 8-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Վոլոդյա Գագիկի Մանվելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով թիվ 09162123 (ԵԴ1/0093/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ա.Մաթևոսյան) 2025 թվականի հունվարի 13-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0093/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մարտի 27-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0093/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Ս.Դաղոյան) 2025 թվականի ապրիլի 14-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0073/01/25 (ԵԴ1/0093/01/25) քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3.1. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հունիսի 17-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0073/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 30-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0093/01/25 (ՀԿԴ/0073/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ առարկայական ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի 7-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Վոլոդյա Մանվելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«(…) նա կատարել է իրեն վստահված՝ իր տնօրինմանը փաստացի և իրավաբանորեն ազատ կամքով հանձնված առանձնապես խոշոր չափի գույքի հափշտակություն:*

Այսպես, Վոլոդյա Գագիկի Մանվելյանը, աշխատելով «Ջերմուկ Ինտերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊ ընկերությունում՝ որպես շուկայի զարգացման պատասխանատու, և ունենալով «Ջերմուկ Ինտերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊ ընկերության հետ համագործակցող տնտեսավարող սուբյեկտներից մատակարարված ապրանքների դիմաց գումարներ հավաքագրելու և գումարները

նույն օրը նշված ընկերության դրամարկղ մուտքագրելու պարտականություն, քննության համար չպարզված ժամանակաշրջանում 28 տնտեսավարող սուբյեկտներից հավաքագրել է «Ջերմուկ Ինտերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» ՍՊ ընկերությանը պատկանող, որպես աշխատակից իրեն վստահված՝ իր տնօրինմանը հանձնված 8.057.278 ՀՀ դրամի չափով գումար և չի մուտքագրել ընկերության դրամարկղ՝ հափշտակելով նշված գումարները: (…)»[1]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մարտի 27-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Նախնական դատաքննություններում վարույթի ընդդատության հարցը լուծելու համար գնահատելու հնարավորություն ընձեռող վերը նշված փաստաթղթից մեջբերումը վկայում է այն մասին, որ թվով 28 տնտեսավարող սուբյեկտներից հավաքագրված գումարները «Ջերմուկ Ինթերնեյշնլ Պեպսի-Կոլա Բոթլեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դրամարկղ մուտքագրելու պարտականությունը պայմանավորված է եղել Վոլոդյա Գագիկի Մանվելյանի՝ այդ ընկերության աշխատակից հանդիսանալու հանգամանքով, ինչի ուժով էլ նրա տնօրինմանը ոչ միայն փաստացի, այլև իրավաբանորեն են հանձնվել նշված գումարները, ինչը նշանակում է, որ նա իրեն վերագրվող առանձնապես խոշոր չափերով հափշտակությունը ենթադրաբար կատարել է իր ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ նշված հանցանքը ներառված է «Կոռուպցիոն հանցանքների ցանկը» սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի N1 հավելվածում:*

Այսպիսով.

Դատարանը գտնում է, որ Վոլոդյա Գագիկի Մանվելյանին մեղսագրված հանցանքը կոռուպցիոն բնույթի է, այն ներառված է ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկը» սահմանող N1 հավելվածում, որպիսի պայմաններում ԵԴ1/0093/01/25 քրեական գործն ըստ առարկայական ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելուց բացի այլ որոշում կայացվել չի կարող: (…)»[2]*:*

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 170-171:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 58-61:

8. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հունիսի 17-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝*

- Վոլոդյա Մանվելյանի մեղադրանքում բացակայում է այն ձևակերպումը, որ նա ենթադրյալ արարքը կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Քրեական օրենսգրքի հավելված N1 համաձայն՝ «Հոդված 256. 2-րդ մաս, 2-րդ կետ. Վատահված գույքը հափշտակելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, 3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով», այսինքն՝ ենթադրյալ արարքը Քրեական օրենսգրքի հավելված N1 ցանկով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների շարքին դասելու համար անհրաժեշտ է, որ այն կատարվի միայն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ Վոլոդյա Մանվելյանին առաջադրված մեղադրանքում բացակայում է այն փաստական տվյալը կամ ձևակերպումը, որ շուկայի զարգացման պատասխանատուն ունի կամ կարող էր ունենալ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցություն:

Իշխանական կամ ծառայողական լիազորություններն իրականացնում են պետական մարմինները կամ պաշտոնյաները՝ հանրային իշխանության անունից, սակայն շուկայի զարգացման պատասխանատուն այդպիսին չի հանդիսանում:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության դրսևորման հիմնական ձև, պետք է իրականացվի որոշակի սահմաններում, որի չափանիշներից մեկն էլ քրեական գործի ընդդատության ինստիտուտն է, որը սահմանում է, թե որ դատարանն է իրավասու քննել գործը, որպեսզի երաշխավորվեն անձի՝ դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իրավունքները, բացառելով քրեական գործը քննելու պատշաճ դատարանի որոշման վերաբերյալ վեճերը, որպիսի պայմաններում Դատարանը

հաշվի առնելով, որ ենթադրյալ հանցավոր արարքը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, վարույթի հանրային և մասնավոր մասնակիցները համաձայն չեն, որ Հակակոռուպցիոն դատարանը շարունակի գործի քննությունը, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0073/01/25 քրեական գործն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, որպիսի պայմաններում անհրաժեշտ է ՀԿԴ/0073/01/25 քրեական գործը փոխանցել ըստ ընդդատության: (…)»[3]:

9. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 30-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263 հոդվածից (…) ակնհայտ է, որ վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ ցանկացած վեճ կարող է լուծել բացառապես ՀՀ վճռաբեկ դատարանը (համապատասխան կազմով), ինչը նշանակում է, որ վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, դրա առարկայական ընդդատության վերաբերյալ իր անհամաձայնությունը կարող է բարձրացնել մինչև նախնական դատալսումներ նշանակելը և բացառապես ՀՀ վճռաբեկ դատարանի առջև:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263 հոդվածի 5-րդ մասի բովանդակությունը վկայում է նաև այն մասին, որ վարույթն ըստ առարկայական ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նախնական դատալսումներ նշանակելու մասին որոշում կայացնելով, ըստ էության, իր համաձայնությունն է հայտնում վարույթի ընդդատությանը, և գործը, ընդդատության կանոնների պահպանմամբ, ընդունում է վարույթ:

(…) Մեջբերված իրավանորմերը ու դրանց վերաբերյալ իրավական վերլուծությունները կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ՝ ակնհայտ է, որ

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 35-38:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանն, ըստ ընդդատության ստանալով Վոլոդյա Գագիկի Մանվելյանի վերաբերյալ քրեական գործը, և համաձայն չլինելով դրա առարկայական ընդդատությանը, այլ կերպ, քան վարույթը ՀՀ վճռաբեկ դատարան ուղարկելու մասին որոշում կայացնելու միջոցով այդ անհամաձայնությունն արտահայտել չէր կարող:

Այսպիսով.

Նկատի ունենալով, որ ստեղծված իրավիճակը չի բխում դատական վարույթների ընդհանուր պայմանները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածներից և կարգավորված չէ օրենքով, իսկ առաջին ատյանի դատարանն իրավասու չէ գնահատել նույն ատյանի մեկ այլ դատարանի որոշումների իրավաչափությունը, գտնում եմ, որ «Վարույթի ընդդատության հարցը քննարկելու մասին» ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի հունիսի 17-ի որոշման իրավաչափությունը գնահատելու, ինչպես նաև թիվ ՀԿԴ/0073/01/25 (ԵԴ1/0093/01/25) քրեական գործի առարկայական ընդդատությունը վերջնականապես լուծելու և վարույթի «անվերջ շրջապտույտից» խուսափելու նպատակով այն Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին որոշում կայացնելուց բացի այլ ելք չի մնում: (…)»[4]*:*

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

10. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0093/01/25 (ՀԿԴ/0073/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

11. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 50-53:

«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

12.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

13. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

(14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախաապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար: (…)»[7]*:*

14. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են*

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

16. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, 2025 թվականի մարտի 27-ի որոշմամբ, արձանագրելով, որ Վ.Մանվելյանն իրեն վերագրվող առանձնապես խոշոր չափերով ենթադրյալ հափշտակությունը ենթադրաբար կատարել է իր ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, որոշում է կայացրել

քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին[8]:

- Հակակոռուպցիոն դատարանը փաստելով, որ Վ.Մանվելյանը ենթադրյալ հանցանքը չի կատարել «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն» օգտագործելով, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[9]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, 2025 թվականի հունիսի 30-ի որոշմամբ արձանագրել է, որ Հակակոռուպցիոն դատարանը, ըստ ընդդատության ստանալով Վ.Մանվելյանի վերաբերյալ քրեական գործը, և համաձայն չլինելով դրա առարկայական ընդդատությանը, պետք է թիվ ՀԿԴ/0073/01/25 (ԵԴ1/0093/01/25) վարույթն ուղարկեր ՀՀ Վճռաբեկ դատարան՝ վարույթի առարկայական ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար[10]:

17. Նախևառաջ հարկ է արձանագրել, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 5-րդ մասի՝ վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը **մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում** որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը: Մինչդեռ, սույն դեպքում Հակակոռուպցիոն դատարանը, ստանալով թիվ ԵԴ1/0093/01/25 (ՀԿԴ/0073/01/25) վարույթը, որոշում է կայացրել նախնական դատալսումներ նշանակելու մասին, իսկ 2025 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել վերոնշյալ կանոնի խախտմամբ քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

Արձանագրելով հանդերձ Հակակոռուպցիոն դատարանի կողմից վերոնշյալ կանոնի խախտմամբ վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու հանգամանքը, այնուամենայնիվ հիմք ընդունելով անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակությունը և դրա՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսանալը, գտնում ենք, որ սույն վարույթի ընդդատության հարցը ենթակա է լուծման:

18. Սույն որոշման 16-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Վ.Մանվելյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից հետևում է, որ ենթադրյալ հանցանքը ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ ***«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»*** եղանակով կատարելու հատկանիշը վերջինին մեղսագրված չէ: Հետևաբար, հիմք ընդունելով գործը բացառապես անձին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների սահմաններում քննելու օրենսդրական պահանջը, գտնում ենք, որ Վ.Մանվելյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման պայմաններում, սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

19. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0093/01/25 (ՀԿԴ/0073/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

20. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/0093/01/25 (ՀԿԴ/0073/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Վոլոդյա Գագիկի Մանվելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով թիվ ԵԴ1/0093/01/25 (ՀԿԴ/0073/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ